

ԱՐՏԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1967թ. ապրիլի 20-ին Երևանում:

1974-1979թթ. սովորել է Երևանի Էռնեստ Թելմանի անվան թիվ 13 միջնակարգ դպրոցում:

1979-1984թթ. սովորել է Երևանի թիվ 142 միջնակարգ դպրոցում:

1984-1989թթ. սովորել է Երևանի սննդի արդյունաբերության տեխնիկումում՝ տեխնիկ-տեխնոլոգ մասնագիտությամբ:

1985-1987թթ. ծառայել է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում:

1996-1998թթ. սովորել է Մոսկվայի <<ELITA>> դիվանագիտության ակադեմիայում: Մասնագիտությամբ դիվանագետ է:

1998-2001թթ. սովորել է Երևանի Էկոլոգիայի, տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտում: Մասնագիտությամբ տնտեսագետ է:

1998-2002թթ. եղել է Ռուսաստանի Դաշնության Ժուռնալիստների միջազգային միության անդամ:

1989-1991թթ. եղել է Երևանի կենցաղսպասարկման վարչության <<Բարեկամության կասկադ>> համալիրի մատակարարման բաժնի պետ:

1991-1993թթ. եղել է Երևանի սերվիս վարչության տնօրեն:

1999-2003թթ. եղել է <<Սարքշին տրեստ>> ՍՊԸ-ի տնօրեն:

2001թ.-ից 4/7 համատիրության նախագահն է:

2003-2005թթ. եղել է <<Տորք Անգեղ>> մարզամշակութային կենտրոնի համակարգող:

1989-1991թթ. ներգրավվել է Հայոց ազգային բանակի շարքերում:

1991-1995թթ. ընտրվել է Երևանի Խորհրդային շրջանի պատգամավոր:

2002 և 2005 թթ. ընտրվել է Նոր Նորք համայնքի ավագանու անդամ:

2006թ. եղել է <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցության ակտիվ անդամ և Նոր Նորք համայնքի խորհրդի անդամ:

2004թ.-ից <<Հայաստանի ավագանիներ>> հասարակական կազմակերպության անդամ է:

2008թ. վերընտրվել է Նոր Նորք համայնքի ավագանու անդամ:

2009թ. ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:

Ամուսնացած է, ունի 4 երեխա և 1 թոռ:

